

ՀԱՆԳԷՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ո Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Յ Ա Փ Ր Ի Կ Է

Ի Գ Ա Ղ Ղ Ի Ա Կ Ա Ն Կ Ո Ւ Ի Ա Ն Ա

Ա

Պատրաստողքիւնք ձանապարհին. — Կոշիակայի վարչական
իշխանութիւնն. — Ընկայք Սեւերոնն հարաւ:



ուսուարի առաջին օրերէն սկսայ ընել իմ պատրաստութիւններս: Այս երկարածիզ ճանապարհորդութեան համար շատ բաներ կարեոր էին ինձ, — ուտելիք, զգեստեղէնք, բժշկական գեղորէք, սուրբ պատարագին մատուցման և խորհրդոց կատարման կարեւոր առարկայքն. և դարձեալ այլ և այլ ընծայք Մանայի մեծամեծաց և ամէն աստիճանի գլխաւորաց համար, — ծխախոտ, ղէնք, տապաքք, դանակք, կերպուք, ապակեղէն անօթք, հայելիք, և այլ ամենայն ինչ, զորս դիւրաւ կրցայ գտնել 'ի վաճառանոցս Կախեննայի:

Արդ որովհետև ճանապարհորդութեանս նպատակն էր՝ քարոզել ճշմարիտ հաւատքը այն ժողովրդոց, և հետեւաբար զննել զանոնք 'ի վերաբերութեան և 'ի հաղորդակցութեան ընդ գաղղիական գաղթականութեան, ճանապարհորդութեանս ծախուց նկատմամբ տեղոյս գաղթական վարչութեանն օգնութիւն և նպաստ խնդրել պատշաճ համարեցայ: Այսու նպատակաւ զնացի առ Պ. Լը ֆարտինալ, որ էր ընդհանրական վերատեսուչ ժողովան զօրութեան և կուսակալ կուխանայի,

զոր երբեմն ճանչցեր էի 'ի կուստալուբա, և որ 'ի սկզբանէ հետէ մեծ սէր և բարեկամութիւն ցըցուց առ իս: Այս իմ այցելութիւնս կը համարուէր նաև իբրև ցաւակցութիւն մի. վասն զի Պ. Լը ֆարտինալ զրեթէ քառասնօրեայ ժամանակի մէջ կորոյս իւր չորս որդիքը՝ ղեղիկն կոչուած անդէ հարուած ետք: Ինքն եկեր էր հոս 'ի նոյեմբերի 1885 տարւոյն, իւր կիսն և որդիքներն մէկտեղ: Երբ անոր այցելութեան գնացի (Յունուարի տասուերկուքին) 'ի գիւղն իւր Պորտայի, միայն իւր աղջկանց մեծագոյնն ողջ մնացեր էր, և սա իսկ հազիւ ազատեր էր մահուան վտանգէն:

Յետ երկար խօսակցութեանց իւր սիրելեաց մահուան նկատմամբ, յայտնեցի իրեն իմ ճանապարհորդութիւնս զէպ 'ի Մարտինի 'ի մէջ Պոսք և Պոնիս սուերուն, և խնդրեցի յանձնագիր մը ճանապարհին ծախուց համար: Պ. Ոստիկանն լու հասկցաւ որ իմ առաքելութիւնս շատ օգտակար էր և զարգացուցիլ քաղաքականութեան, և թէ այն ժողովուրդները մեզի մերձեցընելու միակ միջոցն էր քարոզել անոնց ճշմարիտ հաւատքը: Ուստի և յօժարակամ սիրով ընդունեցաւ իմ խնդրքս, և սղաչեց որ այսու նպատակաւ ուրիշ

աղերս մ'ուզղեմ առ Պաշտօնեայն ներ-
քին գործոց տէրութեան :

Իմ խնդիրքս յանձնուեցաւ գաղթա-
կան Ոստիկանութեան, որ կազմեալ էր
ընդհանուր Ժողովոյն շորս անդամներէ,
որք կրօնից թշնամիք էին, ուստի և
մերթեցին խնդիրքս: — Սակայն կու-
սակայն հաստատուն կեցաւ իւր բարի
կամաց մէջ. և յետ իմ մեկնելուս հինգ-
հարիւր լիւրայից գումար մը ժողովել
տուաւ այլ և այլ իրեր գնելու համար
և ընծայելու Սեւերուն զխաւորաց:

Յետ կատարելու իմ ամենայն պատ-
րաստութիւններս, առի՛նաս հետս դիւ-
րատար անկողին մը իրեն վարագոյր-
ներով մէկտեղ, անձրեարգել գործի մի,
լիֆօշեօ (lefauchoux) կոչուած հրա-
ցան մը, զոր ընծայեր էր ինձ կախ-
եննայի բարեկամացս մին. և սպասե-
ցի յաջող պատեհի մը ՚ի Մանա երթա-
լու, ուր կ'ուզէի ընել իմ առաջին դա-
դարս:

Բ

Ի Կախենկեսայէ միւնչև ՚ի Մանա. —
Գետաբերաւ Մանայի և Մարտնեսայ.
— Մանա գիւղն. — Ուրիւսնոց Արա-
րուանեսայ:

Շուտով հասաւ այն յաջող առիթն՝
որում կը սպասէի: Յունուար ամսոյն
քսաներեքին ողջունելով Կախեննայի
կրօնակից եղբարքս, գնացի ՚ի Յոյս
(Espérance) կոչուած նաւն, որոյ տէրն
էր Պ. Բեներբէ՛ Կախեննայի վաճառական
մի, որ անձամբ ընկերացի ինձ մինչև ՚ի
նաւն. և հոն մեծ խնամով յանձնեց զիս
փրթի-փափա նաւապետին, զոր ես ար-
դէն առաջուրնէ իսկ կը ճանչնայի: Նաւն
վաճառք կը տանէր ՚ի Մանա և երե-
սուն ճանապարհորդ, որոց մեծագոյն
մասն ոսկեհանքի աշխատաւորք էին:

Յիրաւի պէտք է տեսնել այն նաւը
և անով ճանապարհորդել, որպէս զի
կարելի ըլլայ ճիշդ գաղափար մ'առ-
նուլ անոր միջի եղած խառնակութեան:
Ստուգիւ խառն ՚ի խառն կոյտ մի էր

մարդկան, գինեոյ տակառաց, իւղի ա-
նօթոց, վաւաքի կողովոց և այլեր պար-
կերու, ուստի անկարելի էր շարժիլ.
մինչև նաւատիք անգամ նաւուն խել-
քէն առաջքը երթալու համար և կամ
առադաստները պարզելու և ամբիփե-
լու համար, նաւուն շուրջանակի վա-
րագուրաց և առասանաց վրայէն կ'ան-
ցնէին: Նաւապետն բնաւ պարտք չու-
նէր ճանապարհորդաց կերակուրը հո-
գալու, այլ իւրաքանչիւր ոք իւր անձին
յատուկ պէտքը պիտի հոգար: Ուս-
տի ամենայն ոք ամէն կողմ կը ճաշէր,
առջևէն և ետևէն ունենալով բազմու-
թիւն մը սեղանակցաց. և այսպէս ա-
մենամեծ զուարթութիւն մի կը տես-
նուէր ՚ի խօսակցութիւնս:

Նաւապետն փրթի-փափա չուզեց
նուազագոյն երևիլ քան գայլս ՚ի շատ-
խօսութեան, և պատմեց ինձ իւր մէկ
ճանապարհորդութիւնը՝ զոր ըրեր էր
յԱբրուակու՝ Զիվիլիւս կոչուած նաւով:

« Նոյն նաւուն մէջ էր նաև, ըսա-
նա, Հ. Կուխտոյ: Գիշեր ատեն գետին
բերանայն մօտ խարիսխ ձգած կեցեր էր
նաւն և կը սպասէինք ծովուն մակըն-
թացութեան: Հազիւ թէ լուսնցաւ՝
խարիսխն վեր աւնուեցաւ և առա-
գաստներն պարզեցան. հասնելով ՚ի
միջնառագաստն՝ զգացինք ծանրու-
թիւն մի որ կ'արգելայր վերացրնել ա-
ռագաստը. նայեցանք ուշադրութեամբ.
... կրնաս գուշակել թէ ո՞վ էր...
Հ. Կուխտոյ էր, որ բոլոր գիշերը ինկեր
պտակեր էր առողաստին ծաղուածոց
մէջ և անուշ քուն մը տարեր էր »:

Այլ միշտ չի գտնուիր միջնառագաստ՝
անոր վրայ գիշերը անցընելու համար:
Այս նաւերուն մէջ պէտք է մարդ իւր
անձը հոգայ՝ որչափ որ կարելի է, և
մեծ բան է, եթէ կարող ըլլայ պատըս-
պարել ինքզինքը յանձրեւոյ և ՚ի գիշե-
րային ցրտոյ:

Մեր ճանապարհորդութիւնն խիստ
զեղեցիկ եղաւ՝ յունական կոչուած
հողմոյն և ծովուն ընթացից պատճա-
ռաւ՝ որ Կուխտայի ափանց երկայնու-
թեամբ կ'ըլլայ: Հետագայ օրն առա-

ւօտը կանուխ հասանք 'ի դետաբերանն Մանայի:

Ծովուն այն ընթացքն՝ որ կ'ըլլայ կուխանայի ափանց երկայնութեամբն, է կուշի-Սքրայմ, զոր այսպէս կոչեն նաւաստիք, որ Ամազոնաց գետոյն բերանէն սկսեալ երկու կը բաժնուի, մին կ'երթայ 'ի հարաւ և միւսն 'ի հիւսիս: Այս յետինս՝ կուխանայի ափանց երկայնութեամբ երթալով, կը մանէ 'ի ծոցն Մեսսիքոյի, կեղրոնական Ամերիկոյ աշխարհաց քովէն կորագիծ երթալով՝ կ'անցնի Ֆլորիտայ ծովանցքէն, դարձեալ վեր կ'ենէ զէպ 'ի հիւսիս՝ միշտ Միացեալ-Նահանգաց եզերքէն քերելով, և կը հասնի 'ի Նոր-Երկիրուր կը պատահի հիւսիսային յուրաշուրերուն ընթացից, և այն ատեն կ'ուզի զէպ յարեելք՝ հասնելով յափունս Իւլանտայի, Անգղիոյ, Գաղղիոյ: Ծովուն այս ընթացքն յիրաւի գետ մի է գաղջըրոյ, որոյ երագութիւնն է երեք հանգոյց կամ թէ երեք մղոն 'ի մի մի ժամ, զոնեա այսպէս է գաղղիական կուխանայի ափանց երկայնութեամբ:

Խարխալս իջուցինք սպասելով ծովուն մակընթացութեան, որ շատ զգալի կ'ըլլայ գետոյ մէջ. օրինակ իմն, 'ի Մարտի ծովուն ջուրց մակընթացութիւնն կ'երևի մինչև ութսուն նաւ իննսուն իսկ քիլոմէր գէպ 'ի ներս: Ուստի և ամենայն իրաւամբք կուխանայի գետերն կրնան կոչուիլ գնալուն ձաւնապարնք: Եւ յիրաւի Հնդիկք այսպէս կը կոչեն այս գետերը, որք փոփոխակի կը բարձրանան և կ'իջնան. և այն ամէն վեց ժամուն մակընթացութեանէն յառաջ եկած ջրոյ ընթացքն՝ որ և մակընթացութեանց սաստիկ երողութիւն կու տայ, հողմոյ պէս՝ թե՛ Եկք և թէ՛ Հնդիկք այս բանէս օգտուելով՝ երբեք իրենք զիրենք վտանգի մէջ չեն դներ 'ի նաւարկել կամ ընդդէմ հողմոյ կամ ընդդէմ մակընթացութեան:

Արդ 'ի հարաւակողմն եզու մակընթացութիւնն. վեր առինք խարխալսը, և յետ երկիցս զարնուելու և բախելու ա-

ւազակուտից, երեկոյեան վեցերորդ ժամուն հասանք յԱւարթ Մանայի: Երեսուն երկու ժամուց մէջ դրեթէ երկու հարիւր մղոն տեղ կտրեր էինք. ուրովհետև ցամաքով 'ի կախեննայէ մինչև 'ի Մանա հեռաւորութիւնն է հարիւր իննսուն և վեց քիլոմէր: Մօտ էինք հասնելու յափն գետոյն, և ահա տեսայ հեռուէն սիրելի եղբայրակիցներս՝ ՊՊ. Հարքն Քրէնէր և Պիւիստոն, զորս և կրցայ սակաւիկ մի յետոյ գիրկընդխաւն համբուրել:

Մանա դետն, որոյ անուամբ կը կոչուի և գիւղն, 'ի հարաւոյ գէպ 'ի հիւսիս կը հասն գրեթէ երկուհարիւր յետոյն վերի կողմերը կը գտնուին եթէն կամ ութ ոսկերուս երկիրներ, յորոց ոմանք նշանաւոր ես են: Գիւղն կը գրտնուի գետոյն ձախակողմը, չորս կամ հինգ քիլոմէր հեռու գետին բերանէն, շինուած է աւազայ բարձրադէզ կոյտի մի վրայ, որ է շարունակութիւն այն աւազակոյտին՝ որ 'ի կախեննայէ կը տարածուի մինչև 'ի դետն Մարտի: Յետ կախեննայի՝ գաղղիական կուխանայի ամենէն նշանաւոր տեղին է թէ իրեն բազմամարդ ժողովրդեամբ և թէ վաճառականութեամբ, զոր հիմնեց խոնարհ միանձնուհի մի, Պատուական Մայրն Ժափուեյ, հիմնադիր կուսանաց Ս. Յովսեփայ կլիւնեայ:

Այն քալ և հզոր կլինն՝ զոր Մեհաննն կը կոչէ Շաղապրիան, յամին 1828 եկաւ այն տեղը ուր որ կը գտնուի հիմակ գիւղն, իւր հետն առնելով երեսուն և վեց կուսանք, երեսունեկին մը շակք՝ երեք տարուան համար վարձեալք, և ուրիշ զանազան տղաք՝ գալտորէից մշակութեան համար: Յամին 1875 երոպացի գաղթականք գրեթէ ամէնքն ալ թողուցին այն տեղը, լիննալով դաշնադրեալ ժամանակը. ահոր համար Պատուական Աքբաուհին խնդրեց և ստացաւ 'ի տէրութեանէ, որ վաճառիկ Սեկրն՝ 1831 տարւոյն Մարտ 4ին օրինաց զօրութեամբն ազատեալք, խրկուին յաշարգաբար յեզերս Մա-

նայի: Ուստի հինգ-հարիւր յիսու սեղբ
ազատեալք 'ի վաճառողաց քրիստո-
նէական կրթութեան շնորհիւ՝ ձեռա-
գործ վաստակովք վայելեցին ապա 'ի
կատարեալ ազատութեան:

Աճեցաւ ժողովուրդն, և Մանայի բը-
նակիւքն՝ որ արգ գրեթէ մինչև յուր-
հարիւր կը հասնին, կը պարծին թէ
երբեք գերի չեն եղած. և ունին իրենց
սրտին մէջ անմուտաց յիշատակ մի յար-
գանաց և երախտագիտութեան առ Սի-
րիայի Մսայրն, ինչպէս կը կռնեն գեռ-
տոննք զՊատուական Մայրն Ճավուէյ:
Կուսանքն Ս. Յովսեփոս, իբրև արձան
յիշատակի իրենց յարգելի հիմնադրին՝
պահեցին հոն մեծ և անուանի կրթա-
րան մի: Անոնք շարունակեցին մինչև մեր
օրերը՝ հրահանգել և վարժել պատա-
նինքը երկուց ևս սեռից. և կը շարու-
նակեն տակաւին մշակել բաւական բն-
դարձակ երկիր մը, և կը պահեն գոյն
գործարան մի շաքորի, որմէ զուրս
չի գտնուիր այլ նոյնպիսի գործարան
'ի կուխանս:

Ի միաբանութեան կան տասն միան-
ձնուհիք, յորոց ոմոնք երջանիկ կը հա-
մարուին՝ ճաշցած ըլլալով զյարգելի
Մայրն և անոր հետ աշխատած: Ոչ
առանց յուզման սրտի տեսայ 'ի դահ-
լըճի Միաբանութեան՝ անոր փայտեայ
աթոռը, ծնրադիր աղօթարանը, և ա-
նոր ուրիշ այլ և այլ գործածած առար-
կայքը 'ի բնակութեան Մանայի, որք
ցարդ ևս տակաւին կը պահուին իբրև
պատուական նշխարք:

Մանա է նշանաւոր և լայնափողոց
աւան մի. ունի բնդարձակ և չքեղա-
զարդ եկեղեցի, ժամացոյց մի յաշ-
տարակի զանգակատան, տէրութեան
գեղեցիկ պաշտօնարան, և ուրիշ հո-
յակապ տուներ: Ներկայապէս իւր
բնակիչքն խառն են. հոն սպիտակ են
միայն ճանապարհաց աւազքն և քանի
մի սակաւ Եւրոպացիք. իսկ անկէ զատ
ամէն զուրով ամէն ազգէ մարդիկ կը
գտնուին: Մանայի Սեւրուն հետ մէկ-
տեղ կան հոն Գողքը, Չինացիք, Անա-
մացիք, Կարմրամորթք և ամերիկեան

Հնդիկք, Թափուք կամ Փորթոկէզ խառ-
նածինք, Պոսք, Պոնիւպք, Փարամաքք,
Սարամաքք և Արապք. դոնէ տասն զա-
նազան լեզուք հոն կը խօսուին: Այս-
պիսի խառնուրդ մը ստուգիւ կ'օգնէ
այն տեղոյն բարոյական վիճակին զար-
գացման:

Այլ մանաւանդ ոսկերուխ երկիր-
ներն են՝ որք կը գտուին 'ի վերնակող-
մանս գետոյն, որոնք կը ձգեն հոս ըզ-
բազմութիւն մարդկան յաւնեայն ազ-
գաց: Արգ հարկ չէ բսի, թէ յիրա-
ւի այս ժողովուրդս՝ որ աւելի պէտք
ունի հոգեւորական օգնութեան, գրա-
ւեց իմ ամէն հոգս և խնամքս և անոր
համար ըրի այս ճանապարհորդու-
թիւնս:

Մինչդեռ կը բնակէի 'ի Մանա, յետ
կատարելու հոգևոր կրթութիւնքը՝ զոր
կ'ընէի կուսանաց, Դստերց Մարեմայ և
պատանեկաց, միւս ազատ ժամանակ-
ներս կ'երթայի այցելելու Ռերկանոցին,
որ շինուած է յաջակողմեան ափունս
Աքքարուանեայ՝ որ վտակ մի է օժան-
դակ Մանայի, և հեռու այս աւանէս
տանուհինք քիլոմէտր Այս ուրկանոցս
ալ՝ որ շինուած է գեղեցիկ և հրաշալի
բարձրաւանդակի մի վրայ և կը տիրէ
փոքրիկ գետակին, գործ է նորին ին-
քեան Պատուական Մօրն Ճավուէյի:
Այն տեղոյն օգն է զովագին, Ղուբըն
յստակ, երկիրներն արդաւանք, կը
գտնուին առատ վայրէ սրաք. միայն մի
բան կը պակտի, և այն՝ հիւանդքն
են: Ներկայապէս տասներկու հիւանդք
միայն կը գտնուին, մինչդեռ 'ի կտիեն-
նա և յայլ զանազան տեղիս գաղթա-
կանութեան՝ հարիւրաւորք են: Ամէն
տեղ կը գտնուին բորոսք, 'ի բաց ա-
ռեալ միայն Աքքարուանի. այս ուրկա-
նոցիս իւրաքանչիւր հիւանդին վրայ ե-
ղած ծախքն զրեթէ երեքհազոր լիւրա
կ'արժէ գաղթականութեան. և այս
ստակալի հիւանդութիւնս օրէ օր կը
ճարակի միշտ բովանդակ կուխանեան
ժողովուրդեան մէջ:

Նախ քան զմեկնիլն իմ 'ի Մանայէ,
Պ. Հ. Գրէնտեր՝ որպէս թէ բարեյաջող

եք մը մաղթելով առաքելութեանս, ըրաւ ինձ այս շնորհքս՝ մկրտելու քա-
րամաքայի հինգ Սեբր, որք պատանիք
էին և աղայք: Այս եղաւ երախայրիք
առաքելութեանս այս ժողովրդոց մէջ,
որք դեռ ևս թաղեալք են ՚ի ստուերս
մահու:

Գ

Մեկնիլն իմ ՚ի Մաւայէ. — Մարու-
նի. — Ս. Լաւրենտեայ գաղարկաւնու-
րիչնն. — Փոխադրութիւնն, քէ ի՛նչ-
պէս եղաւ և ի՛նչպէս պետք էր ըլլալ:

Ի փետրուարի 19 ողջունելով մեր
եղբայրակիցքը, մեկնեցայ ՚ի Մանայէ:
Այս փոքրիկ միաբանութեան մէջ ան-
ցուցի, յիրաւի գեղեցիկ և քաղցր օրեր.
և յիշելով վեհօրէնց լուգուիկեայ խօս-
քերը՝ զոր ըսաւ իւր հրաժեշտի և
մեկնելու միջոց ՚ի Յիսուսեանց Մելա-
նու, չեմ կարող լուծեամբ անցնիլ
և չյարմարել Մանայի մեր Հօրց,
« Ի՛վ Յիսուսեանք, այնչափ էք և չու-
նիք ճարտար խոհարար մի: — Այլ այս
առանձին դէպք մի է, և պէտք էր ի-
րաւցնէ ճանապարհորդութեանս նոր-
ընծայութիւնն ալ կատարել. խոհա-
րարութիւնն վայելնտինեայ (այս էր
Մանայի Հօրց խոհարարին անունն)՝
պէտք էր պատրաստել զիս Յովնեփայ
խոհարարութեան:

Յովնեփ՝ զոր հարկ է որ ճանչնաս զու-
չուտով, հաւատարիմ մարդ մի է, զոր
Հ. Քրէննէր ընտրեց ընկերելու ինձ
ճանապարհորդութեանս մէջ: Ի միա-
բանութեան կը կոչուի՝ Յովնեփ Փաւս-
տոս, կամ պարզաբար Յովնեփ. իսկ ՚ի
Մանա, ինչպէս նաև Պոպ և Պոնիս Սե-
ւերուն մէջ ընդհակառակն կը կոչուի
Սէն-Փէ, Մուշէ Սէն-Փէ: Բարի և ա-
ռաքինի քրիստոնեայ, համեստ և հա-
ւատարիմ կայուածատէր ՚ի Քորմորան,
սրտորդ ՚ի Մանա, խոհարար նման վա-
լենտինեայ, գիտէ չափաւորապէս Պոպ
և Պոնիս կոչուած ժողովրդոց լեզուն,
և Ափաթուի հետ մէկտեղ՝ որոյ վրայ

պիտի խօսիմ՝ քիչ վերջը, ընկերեց Պ.
Քրէվոյի անոր ճանապարհորդութեան
մէջ ՚ի Մարոնեայ մինչև ՚ի գետն Ամա-
զոնաց: Այս Յովնեփայ հետ առի փոր-
թոկէզ հնդիկ պատանի մի թովմաս ա-
նուամբ, որ գիտէ կարգալ և գրել, և
պիտի սպասաւորէ ինձ ՚ի պատարա-
դիս. ինքն որք է, սնեալ և վարժեալ
Մոնայի հուսանաց քով:

Քանօթն (տեսուկ մի հնդիկ նաւակ)
որոյ մէջ կը նստիմ և պիտի տանի զիս
Ափաթուի բնակութեան մօտ՝ ՚ի ստու-
րտան առաջին ջրվէժին, բոլորովին կար-
կատուն նաւակ մի է, որ զիւղին այլ և
այլ փորթոկէզ հնդիկները կը տանի
առ Պասթիէն զօրապետն, որոյ այցե-
լութիւն պիտի ընենք անցողաբար: Ուս-
տի մեկնեցանք առաւօտեան ութ ժա-
մուն, իլանք Մանա գետին միջէն. գը-
րեթէ կէսօրուան մօտ հասանք ՚ի Հաթ-
թէ, և երեկոյեան ժամը չորսին հա-
սանք Ս. Լաւրենտեայ զիմաց:

Մարոնի ամենէն աւելի մեծ գետն
է Կուխանայի, և կը հասի թումուր-Հու-
մուք լեբանցմէ: Նաւարկելի է մինչև ՚ի
ջրվէժն Հերմինա, այսինքն է՝ իննսուն
և հինգ քիլոմէտր երկայնութեամբ ՚ի
բերանոյ գետոյն, և մինչև այն տեղ ըզ-
գալի կերպով կը տեսնուի ջրոյ մակըն-
թացութիւնն:

Հաղու թէ անցանք դաղղիական Սա-
րաւանդը՝ որ կը բաժնէ գետին երկու
բերանները, անսովոր զգացում մի ու-
նեցայ՝ երբ տեսայ այն վսեմ և յորդա-
հոտ գետը, որ յետ հինգհարիւր քիլո-
մէտր ընթանալու իւր աղբերակէն սկը-
սեալ՝ գրեթէ երեք քիլոմէտր կը հասի
սաստիկութեամբ ՚ի մէջ ժովուն:

Մանայէն իջած միջոցնիս օգտակար
եղև մեզ ջրոյ ընթացքն. և երբ հա-
սանք ՚ի բերանն Մարոնեայ՝ տեղատու-
ութիւն ջուրց եղաւ: Չորս ժամէն
նուազ միջոցի մէջ քսաննհինգ քիլո-
մէտր տեղ կտրեցինք և հասանք ՚ի Ս.
Լաւրենտիոս, մինչդեռ կը տեսէր մակ-
ընթացութիւնն ջուրց ինչպէս նաև յու-
նական սաստիկ հողմը:

Ս. Լաւրենտիոս՝ ամենէն աւելի նշա-

նաւոր արգելարանն է ոճրագործաց համար: Հիմնեցաւ այս շէնքս յամին 1858 ընդ իմաստուն տեղաւթեամբ Մեղիննի: Երկուհարիւր յիսուն քիւլմէդր հեռի է ՚ի Կախեննայէ: և այն աւտեն գեղեցիկ յոյսեր կու աար: Հնն կուղէին բանալ մեծ վարժարան մի երկրագործական, յիտ անանելու ապարդին փորձերը Ս. Գէորգայ տէրութեան յյլեափոք. անդ ևս հաստատեցին շնորհմանց դրութիւնը, որ պիտի ըլլար ապա միտկ միջոց գաղթականութեան, եթէ կարելի ըլլար լեցընել ըզկուխանս մինակ եւրոպացի գաղթականազ:

Այս դրութիւնս էր՝ շնորհել իւրաքանչիւր արքայրկոյ՝ յետ կրելու իւր պատիժը՝ տուն մի, առանձին մասնաւոր երկիր մը, զանազան գիւղական կահկարասիք և ապրուստ երեք տարւոյ համար. — սակայն ՚ի վերայ այսր ամենայնի բարեխաջող ելք մի չունեցաւ ըստ ակնկալեալ յուսոյն:

Իսկ եթէ ՚ի Ս. Լուրենտեայ դարձնենք աչքերնս ՚ի մշտնջենաւոր սքսարն որ ՚ի Կուխանս, ամէն տեղ պիտի տեսնենք նոյն արգասիքը, նոյնպիտի անարգիւն ելք մի: Այս մշտնջենաւոր սքսարն ՚ի գործ կը դրուի երեսուն և հինգ տարիներէ հետէ, և ՚ի 1854 տարուընէ ՚ի վեր մինչև ցարդ խրկուեցան հոն քսան հազար Գատապարտաւք: Այս գործոյս մէջ Գաղղիոս հարիւր միլիոնէն տւելի ծախք ըրաւ. մեռան մարդիկն, միլիոններն անհետացան և կորուսեցան, իսկ կուխանս և ոչ քայլ մը յառաջեց ՚ի գաղթականութեան:

Ուրեմն ինչ հետեցինել այս երկար և բազմածախ փորձէն: Առաջին թէ ամենեկին անկարելի է երկրի մշակութիւնն եւրոպացւոց համար արեւագարձային աշխարհաց մէջ արեգական կիզիչ ճառագայթից ներքև: Երկրորդ թէ ՚ի Գաղղիա խտրելոյ և ստահակ մարդիկն չեն շահիր իրենց օրապահիկ կերակուրը, և ընդհակառակն բարի և համեստ մարդիկն ստիպեալ են պահել և խնամել զանոնք:

Իսկ այն հոգւոց հոգեւորական արնտեսութիւնն և վարչութիւնն յիւրաքի խիստ խեղճ է: Չանոյցեր են ամենայն կերպով որչափ կարելի է բառնալ ՚ի ՚ի քահանայից ամենայն զօրութիւն և ազգեցութիւն, սակայն առանց բողբոմին ընկճելու և նուաճելու զանոնք, իսկ ընդհակառակն քսարկոց տրուած է լի և կատարեալ ազատութիւն ոչ եթէ իրենց կրօնական պարտքերը կատարելու, այլ մանաւանդ թէ չկատարելու զայնս: Եւ դարձեալ, քանի մի տարի են որ կաքսորուին ՚ի Կուխանս Արարք, Սիք և Անամայեք:

Սակայն ՚ի վերայ այսր ամենայնի Ս. Լուրենտիոս տակաւին գեղեցիկ և հոյակապ շէնք մի է, ՚ի զուարճալի տեղւոյ հաստատեալ, բարետեսիլ և յոյժ վայելուչ, շատ յարմար և պատշաճ տեղի գեղեցիկ քաղաքի մի համար. բայց քաղաքական կարգագրութեամբք և զինուորական ոստիկան պահապանօք չեն կրնար քաղաքներ շինուիլ:

Երբ յԱւարֆ հասանք, բսին մեղի թէ որոնք ՚ի Կախեննայէ և ՚ի Մանայէ կու զան, պէտք է որ ՚ի զգուշութիւն տարափոխիկ հիւանդութեանց երթան յարգելանոցն՝ անոնցմէ սրբուելու մաքրուելու համար: Չանայի համազել զինուորական պահապանք, թէ դեռ նոր հասեր էի, և թէ ՚ի Մանայէ կու գայի, ուր ամիս մը գրեթէ անցուցեր էի և ոչ մի դէպք հիւանդութեան պատճառէր էր հոն. յաւելի ևս թէ այն նաւն որով հասեր էի՝ երկու օր յառաջ թուրացեր էր զՍ. Լուրենտիոս: Սակայն այս ամենայն անօգուտ եղաւ:

Այս բանիս վրայ վշտացեալ՝ բսի պահապանին թէ միայն ՚ի Ս. Լուրենտեայ եկողներն պէտք էին ընել այս զգուշութիւնները և ոչ ես. և թէ ունէի ես հետս մէկտեղ լիւր մի փնիկեան թթուութիւն: Այլ ճշմարիտն ըսելու համար, գրեթէ ամուսան մը մէջ դեղիլուտենի կոչուած հիւանդութեան այլ և այլ դէպքեր պատահեր էին, անոր համար առանց շատ ընդգիմանալու գնացի յարգելանոցն: Սակայն շատ

չյաւեցայ այս բանին վրայ. վասնզի
դտայ հոն ինծի ծանօթ երիտասարդ
մի 'ի կախեննայէ՛ որ շատ ուրախացաւ
զիս հոն գտնելով, և ամենայն գիւրու-
թիւնները մատայց ինձ յարգեւանոցին,
որոյ ինքն էր տեսուհն :

Այս արգելանոցս շտապով շինուած
էր դեռայն փոքրիկ կղզեկի մի մէջ,
հեռի 'ի Ս. Լաւրենտեայ քսան կամ
քսանհինգ վայրկեան. այն կղզեկին
դեախնն այնչափ ցած էր, որ եթէ գետն
առատանար և լեցուէր՝ պիտի ողողէր
ջուրն և կործանէր արգելանոցին յարգէ
խղիկները: Երկրորդ օրը առաւօտուն
կանուխ մեկնեցայ դէպ 'ի Ս. Լաւրեն-
տիս, և սիրելի եղբայրակցացս հետ
անցուցի կիւրակէ օրը՝ որոնք էին Հ.
Պրինտեթիլ և Հ. Պիլիստոն: Այս յի-
տինս եկեր էր 'ի Մանայէ փոխանակ
Հ. Ժալսպերթի, որ գնացեր էր 'ի Մա-
նա բժշկուելու համար 'ի հիւանդութե-
նէ պեղիւն-տեկլի:

Երբ հասայ 'ի Ս. Լաւրենտիսս կը
յուսայի գանել հոն իմ արկղս, յորում
կային այն ամէն առարկայքն՝ զորս զը-
ներ էր ինձ համար տեղւոյն Ոստիկանն,
և գրեւ էին ինձ 'ի Մանայէ՛ թէ 'ի Ս.
Լաւրենտիսս կը խրկենք զայն. սակայն
բան մ'ալ չհասաւ: Այլ այսու հան-
գեքձ որոյնցի մեկնիլ երկրորդ օրը և
երթալ մինչև 'ի Երվէմն Հերմինա՝ հոն
կազմելու և պատրաստելու իմ կահկա-
րասիքս, և խրկել ասոս նաւով գՅով-
սեփ քանի մի օր վերջը առնելու արկղը
և բերելու:

Դ

Ի տան Պարի և Պաւսիկի. —
Սիւարտշիւն. — Հաւատարիւն Արիս-
րու:

Փետրուար 21. — Առաւօտեան ժամն
ուրթին ճամբայ ելանք թողով արգե-
լարանը՝ ուր զրեւր զետեղիւր էի իմ կահ-
կարասիքս և բեռները: Հոմն սաստիկ
կը փչէր, և ժամը տասին հասանք 'ի
կղզին փոքրալ առ Պար կոչուած ըն-

տանիքն, որոնք ունին հոն գեղեցիկ
պալատ մի, և ուր կը մշակեն սուրճ և
օրիւնա (ամբրիկեան բոյս մի): Ա-
նոնց մշակքն քաջառողջը են և ունին
բազմաթիւ որդիք: Երկու տարի առաջ
տեսեր էի այս տեղս և շատ ժամանակէ
'ի վեր կը ճանաչէի Պար ընտանիքը,
որոնք ոչ միայն հմուտ երկրագործք են,
այլ և հմուտ բնապատուէք: Ունին հա-
ւաքում մի թեոխարև կոչուած միջա-
տայ, որոյ հաւասարն չի գտնուիր և ոչ
մեծամեծ թագարանաց մէջ: Հոն քիչ
ժամանակ կեցանք, թէպէտ և ընտա-
նիքն շատ սաղապեց զմեզ հոն իջնանելու:

Երրորդ ժամուս հասանք 'ի գիւղն
Փարսիկեզ, որ կայ Պաւսիկէ կոչուած
կղզւոյն մէջ՝ յանուն զլիւսուորի միոյ
որ երկար ժամանակէ 'ի վեր շատ ա-
նուանի եղած էր բովանդակ հուխա-
նայի մէջ: Երբ կը մտենայինք 'ի կըղ-
զին, քանօրին տէրն իսիրինոս ըսաւ
ինձ՝ խօսելով այն գիւղին նկատմամբ.

*Quand maite potenu tombé, case-là qu'a
tombé, (անշուշտ իմաստն այս պիտի
ըլլայ. Եյր ևգո; իշխակն ինկաւ մե-
նաւ, գիւղն ալ սկսաւ կորսակիլ):* Եւ
ճշմարիտ էր ըսածն: Յետ մահուան
Պասթիէն զօրապետին, գիւղն կործա-
նելու վրայ է: Նիկասիոս որ յաջորդեց
իւր աներոջ յիշխանութեան, շուրի
այնքան մեծ ազդեցութիւն, և սակաւ
սահաւ երկպառակութիւն և անմիա-
բանութիւն կը սկսի տիրել:

Այս բանս յիրուի շատ վնասակար
է, որովհետեւ միայն այս գիւղս էր 'ի
Մարսի, որ ըստ բաւականի քրիստո-
նեայ էր. հինգ կամ վեց ընտանիք կը
գտնուէին հոն, որոնք ամէնն ալ մկրթ-
տուած էին, յորոց սմանք կը հազար-
գուէին իսկ Ս. Խորհրդոյն: Շատ գե-
ղեցիկ սովորութիւն է, զոր ունին ա-
անոնք և դեռ ես կը պահեն. երեկո-
յեան պէմ կը ժողվին մէկտեղ մատրան
մը մէջ՝ որ գիւղին մէջտեղն է, և հոն
միարան կ'երգեն և կը կատարեն իրենց
աղօթքը. աւտի և իրենց տունները եր-
թալէն առաջ, կ'երթան առ իշխանն
կամ առ քարոզիչն՝ երբ անոնց այցե-

Լուծեան կու գայ, և կը խոնարհին առջևը անոր օրհնութիւնը տոնըրու համար:

22 Փետրուար. — Ուխտերորդ ժամուն ճամբայ ելանք, և յետ քանի մի ժամուց հասանք 'ի Սփարաշին: Երբ ելայ 'ի ցամաք, իմոցայ թէ հոն կը գտնուի Ափաթու այն օրերը՝ Ռէյ տիկնոջ հետ, որ իւր կնքամայրն եղած էր և սգոյ զգեստներ կը հագնէր իւր ամուսնոյն վաղահաս մահուան համար: Այս մեր իրերայ պատահումն շատ զեղեցիկ և սխրալի եղաւ ինձ. վասն զի բուրրովին անոր վրայ վատահացեր էի՝ որ կարենամ մարդիկ և նաւակ գտնել իմ ճանապարհորդութեան համար, և զի տէրի ևս թէ խոտացիր էր Ս. Լուսին տեսայ Հարց' ինձ ընկերելու և առաջնորդելու:

Թէպէտ և բնաւ չէի տեսած զԱփաթու, այլ կը ճանաչէի զնա 'ի համբաւոյ. կարգացեր էի Պ. Քրէվոյի բուրր ճանապարհորդութիւնքը, յորս ստէպ կը խօսի անաւատարիմն Ափարաշի վերայ, և շատ կը փափաքէի ես ալ ունենալ զանիկայ ընկեր և առաջնորդ իմ ճանապարհորդութեանս: Վասն զի Ափաթու ընկերած էր Պ. Քրէվոյի իւր առաջին խուզարկու ճանապարհորդութեան մէջ 'ի Վերին-Մարտնի, յեարի և յերկայնութիւն Ամազանաց գետոյն. և ապա յՈրէնոքոյ և 'ի Մագդաղինէ: Շատ իրաւամիք ըսաւ մէկն, որ եթէ քաջասիրտ ճանապարհորդն իւր արշաւանաց մէջ 'ի Փլաթեան-Ռիոյ հետն առած ըլլար զանաւատարիմն Ափարաշ, գուցէ չէր սպանուեր իւր ընկերաց հետ միատեղ այն կողմանց բարբարոս Հնդիկներէն:

Այս ճանապարհորդս 'ի նկարագրութեան իւր արշաւանաց 'ի Մարտնեայ մինչև 'ի գետն Ամազանաց՝ այսպէս կը գրէ. « Ափաթու այնքան քաջասիրտ և հօր հանդիսացաւ, որ եթէ կարելի ըլլար, մեծ սիրով և յօժարութեամբ պիտի կախէի անոր կուրծքին վրայ մի առաջնորդուց »:

Եւ յիրաւի վճռեցաւ տալ անոր այս միտալս յամին 1881 Յունիս 2, և անոր հրամանագրին իմաստն գրեթէ այս է. « Պաշտօնեայն ներքին գործոց պետութեան կը վճռէ տալ ոսկի միտալ մի պատուոյ՝ առաջին աստիճանի՝ առ Ափաթու, որ ընկեր և առաջնորդ ընարուած ըլլալով 'ի Պ. Քրէվոյի իւր ճանապարհորդութեանց մէջ յարեալարձայինն Ամերիկա, մեծ անձնանուիրութիւն ցըցուց շատ առթից մէջ, և շատ անգամ փրկեց ճանապարհորդաց կեանքը »: Յամին 1880 Պ. Քրէվոյի հետ մէկտեղ գնաց 'ի Գաղղիա. հոն զիանալեան և արուեստական ընկերութիւնք ընդունեցան զինքն անգամ իրենց ժողովոց և գումարմանց:

Կէսօրու ընէ վերջը ժամն երկուքին եկաւ նա առ մեզ. անսեր էի անոր նաւալ կը 'ի միւս ափն դետոյն. բերաւ մեզ վայրի որս մը: Գեղեցիկ եղնիկ մի էր, տարածուած 'ի նաւակին, զոր իւր շուներն նետեր էին ջրոյն մէջ, և ինքն սպաններ էր զայն սրոյ հարուածներով: Ափարաշ գրեթէ երեսունհինգ տարեկան սեւագոյն մարդ է, ուժով և բաւական մեծահասակ: Սիրելի անձ մի, մտացի, պարզ և յստակ սրտով. շուտով ծանօթացանք իրարու: Խօսեցանք մէկտեղ և յարմարուցինք, որ հետո պիտի գայ և մարդիկ պիտի գտնէ ճանապարհորդութեան համար: Համազեց զիս որ աւելի յոնձն առնում կենալ 'ի Սփարաշին՝ քան երթալ իւր բնակութեան տեղը. նաև տիկինն Ռէյ սաստիկ թախանձելով համազեց զիս չերթալ այն տեղ, որ յորս ժամաւ հեռի է: Ռէյ տիկինն ունէր ընդարձակ և հանգիստ տուն մի, ուր կ'ուզէր որ կենամ և բնակիմ, որպէս թէ իմ տանս մէջ ըլլայի: Զիջայ անոնց թախանձանոց, և հանել տուի նաւէն իմ բովանդակ կահկարասիքս. հատուցի իմ ճանապարհորդակից թափուլոյ վարձքը և ազատ թողուցի զանոնք որ երթան: